<< ՎԱՐԴԱՆԱՆՔ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ << Առաքելոց Վանքի կռիվը>>

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Ալեքսանյան

Ղեկավար՝ Նունե Ասրյան

Ուսումնական

հաստատություն՝ Երևանի Գ.Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……...…….…….2

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻՎԸ…….……3

ԳԼՈՒԽ 1…….……3

1.1 ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՎԱՆՔ……...3

ԳԼՈՒԽ 2……14

2.1 ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ՝ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ……14

Եզրակացություն……23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……24

Ներածություն

Աշխատանքս վերաբերում է 1901 թվականին տեղի ունեցած Առաքելոց վանքի կռիվներին: 1901 թվականին իրավիճակը Տարոնում վատթարացել էր: Թուրքական կառավարությունը խստացրեց հալածանքները հայերի նկատմամբ:Այդ պայմաններում Տարոնի նշանավոր հայդուկ Հակոբ Կոտոյանը առաջ է քաշում մի խումբ հայդուկներով Առաքելոց վանք մտնելու և ինքնապաշարման դիմելու գաղափարը: Նոյեմբերի սկզբներին 30 հոգուց բաղկացած հայդուկների խումբը Անդրանիկի գլխավորությամբ ամրանում է Առաքելոց վանքում: Խմբի մեջ էին Գևորգ Չավուշը, Հակոբ Կոտոյանը, Ցրոնքցի Մուրադը և ուրիշներ: Առաքելոց վանքի կռիվը տևում է նոյեմբերի 3-27-ը: Այդ ընթացքում վանքում գտնվողների թիվը հայդուկների հետ միասին 140 հոգի էին կազմում: [1]Վանք մտնելուց հետո այն անմիջապես պաշարվում է: Թուրքերը անելանելի դրության մեջ էին, հսկայական կանոնավոր զորագունդը չէր կարողանում հաղթել մի բուռ հայդուկների: Նոյեմբերի 19-ին վերսկսվում են ռազմական գործողությունները: Հայդուկները ամեն կերպ դիմադրում են: Նոյեմբերի 22-ին բանակցությունների համար վանք են գալիս Մեհմեդ Էֆենդին, Մշո առաջնորդ Պեհրիկյանը և Առաքելոց վանքի վանահայր Մուրադյանը: Առաջադրվում են մի քանի պահանջներ հայերի կողմից:Սուլթանը խոստանում է իրագործել հայդուկների պահանջները, եթե նրանք անձնատուր լինեն: Եվ միայն այդ ամենից հետո Անդրանիկը որոշում է դուրս գալ վանքից, քանի որ սպառվում էր զինամթերքը և վաղ թե ուշ վանքը գրավելու էին:

Նոյեմբերի 24-ին թուրքերը նոր հարձակում սկսեցին: Հայդուկները անդրդվելի էին: Թուրկական բանակում մեծանում էր հրամանատարության նկատմամբ դժգոհությունը: Ահավոր ցուրտ եղանակը ավելի էր հուսալքում նրանց, նույնիսկ կային ցրտահարությունից մահվան դեպքեր: Անդրանիկի խումբը վանքից դուրս է գալիս նոյեմբերի 27-ի գիշերը:

1. Տե՛ս Անդրանիկի յուշերը,Պեյրութ,1935,էջ289:

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻՎԸ

1.1 ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՇԱՐԺՎՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՎԱՆՔ

Անդրանիկը Հարությունին պատվիրել էր, որ վանք գալուց իր հետ բերի փամփուշտ լցնելու բոլոր գործիքները, վառոդ, 20000 գնդակ, անգլիական վառոդներ և չախմախլի հրացանի վառոդները: [2]Հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին երեսուն ընկերներով Առաքելոց վանք հասան հայդուկները: Նրանց միացան միմիայն Ցրոնք գյուղի 8-10 տղաներ, մյուսները չկարողացան միանալ, որովհետև վանքը պաշարված էր թուրք զինվորների կողմից: Այնտեղ նրանք գտան վաթսունից յոթանասուն որբեր, ինչպես նաև ուսուցիչներ, քահանաներ, տան աշխատողներ և հովիվներ՝ ընդհանուր առմամբ ութանասուն մարդ: [3]

Անդրանիկը վանքի ավագ քահանա Հովհաննես վարդապետին ուղարկեց Մուշ, որպեսզի վերջինս չմասնակցի կառավարության հետ կայանալիք առաջիկա բախումներին:

Այնուհետև նա մեկ այլ մարդու ուղարկեց Գելիեգուզան՝ Հարությունին փոխանցելու ուղերձ հետևյալ բովանդակությամբ՝

«Հարգելի Հարություն,

Եկեք առանց հապաղելու, որովհետև ամենայն հավանականությամբ վանքը կպաշարվի: Ես երկու զինվոր կուղարկեմ ձեզ ուղեկցելու համար: Եթե դուք այնտեղ չգտնեք նրանց, դա նշանակում է, որ ես չկարողցա ուղարկել նրանց, քանզի պաշարման մեջ ենք հայտնվել: Մենք կփորձենք քողարկել ձեզ, երբ դուք մոտենաք վանքին: Եթե մեզ չհաջողվի ընդունել ձեզ մինչև վաղը արևածագ, ապա մենք կվերադառնանք Սասուն: Եթե մենք ընկնենք վանքի պատերի տակ, դուք կշարունակեք մեր գործը: Բոլոր ընկերները համբուրում են ձեզ,

Անդրանիկ»:[4]

[2] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 24:

3 Տե՛ս Լյուլեճյան Լ., Անդրանիկի բերանով Առաքելոց վանքի կռիվը, Պեյրութ, էջ 18:

[4] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 27:

Հարությունին վանք բերելու համար Անդրանիկը մարդիկ ուղարկեց: Այն մարդիկ, որոնք Հարությունի հետևից ուղարկվեցին հետ են վերադարնում, ձնաբքից վախեցած, իրենց երկու հրացաններն էլ ձյան տակ են թողնում: Անդրանիկը 150 մարդ է գյուղերից ուղարկում հրացանները փնտրելու: Երկար փնտրելուց հետո չեն կարողանում գտնել, մինչև որ գարնան արևը ձյունը հալեցնում է և Սասունցիք գտնում են հրացանները և հանձնում Անդրանիկին:

Հարությունից մի նամակ է գալիս, որում ասվում էր, թե Համբարձումը մեռավ, բայց Սպահանաց Մակարի տղան զինվորներից մեկի հրացանը գողացել է, և այն պիտի գտնի նոր միանա խմբին: Առանց ժամանակ կորցնելու նամակի պատասխանն ուղարկվում է, որտեղ ասվում էր, որ նա անմիջապես պետք է ճամփա ընկնի քանի որ հասունացել է վանքը պաշարելու պահը: Վաղվանից սկսած Ծիր կատարի կողքի աղբյուրի մոտ երկու զինվորներ ամեն գիշեր պիտի մնան մինչև Հարությունը տեղ կհասնի: Եթե տեսնեն, որ աղբյուրի մոտ զինվորներ չկան, ուրեմն խումբը պաշարված է: Վանքի փոքր դռան առջև իրենց համար շատ գեղեցիկ դիրքեր ենք պատրաստվել, ներսից և դրսից կրակելով կկարողանան միանալ իրար: Հակառակ պարագայում եթե պլանը չհաջողվի պետք է ետ դառնալ դեպի Սասուն լույսը չբացված, իսկ եթե խումբը զոհվի ապա իրենց գործը շարունակեն:5 Անդրանիկը Գևորգին, Վաղարշակին, Հաճիին, հրամայեց վանքի դռները փակել, բանալիները նրան հանձնել և հսկեն դիրքերը: Երբ թուրքական այս փոքր խումբը դեպի վանքի մեծ դուռը կընթանար, Հավատորիկ գյուղից փողի ուրիշ ձայն հնչեց, մի ուրիշ ձայն էլ Բերդակից, որը նշան էր տալիս: Թուրքական խումբը հասավ վանքի դռան մոտ: Երբ վանքի երկփեղկանի մեծ դուռը փակ գտան խմբից մեկը սկսեց բարձրաձայն գոռալ: Թե ինչու էր վանքի դռները փակ: Քանի որ անցած օրը 30 զինված ոստիկան և քուրդ հրացանաձգություն էին սկսել և որբերը վախեցել էին, և հենց այդ օրվանից սկսած Մուշի առաջնորդից հրաման ստացվեց, որ փակեն վանքի դռները: Պատասխանն այս էր, որ իրենք քուրդ չեն և հարյուրապետն էլ եկել է վանք և ցանկանում է շրջել վանքում: Վանքից մի գորգ տվեցին և հարյուրապետը նստեց վրան: Եվ սկսեցին փսփսալ իրար մեջ:

Անդրանիկը մտածում էր, որ վանքի փոքր դուռը բացեն, հարյուրապետը և տասնվեց զինվորները անարգել ներս մտնեն: Երբ երբ նրանք ներս մտնեն իսկույն օդի մեջ կրակելով հրացանները գրավեն: Բայց այդուհանդերձ չցանկացան Հարությունին հուսախաբ անել: Թուրք զինվորները և հարյուրապետը մեկնեցին: Երբ մոտեցան Աստվածածնի Աշտարակին 100 քայլ՝

թուրքական փողերը դարձյալ սկսեցին հնչել: Այս փողի ձայներին կրկին պատասխանեցին Բերդակի, Արախի եւ Հավատորիկի թուրք զինվորների փողերը: Նոյեմբերի 4-ին՝ կիրակի օրը, թուրքական կառավարությունը ուղերձ ուղարկեց ֆիդայիններին լքել վանքը, սակայն Անդրանիկը մերժեց՝ լավ իմանալով, որ թուրք զինվորները դարանակալած նրանց կսպասեին, եթե նրանք դուրս գան վանքից նրանց անմիջապես կբռնեն:Նոյեմբերի հինգի առավոտյան վանքի լուսարարը վանք եկավ, երբ Անդրանիկը տեսավ՝ Գևորգին ձայն տվեց: Գևորգը գնաց դիմավորելու Սահակին և իր այլայլումի պատճառները հասկնալու: Նա ասաց, որ որբերին Մուշ պետք է փոխադրեն: Քիչ անց լուսարարը և վարպետ-վարժապետը հորերը քանդում և գործիքներն էին կապում, որպեսզի ուսուցիչներին և որբերին վանքից դուրս հանեն: Այս իրարանցումը տեսնելով, վարպետին իր մոտ է կանչում Անդրնաիկը և տանում Սբ. Գևորգի մատուռը երդում վերցնելու համար: Անդրանիկը հարց ու փորձ է անում լուսարարին, թե ինչ էին ասել նրան, որ որբերին ուզում էր Մուշ տանել: Վարժապետը դողդոջ ու գունատ դեմքով պատմեց, որ պատրիարքարանից լուր էր եկել, որ անմիջապես որբերին Մուշ փոխադրի: Բայց այս պատասխանը չբավարարեց Անդրանիկին և նա սկսեց սպառնալ Սահակին: Նա սարսափահար պատմեց, որ թուրքերը գիտեն նրա վանքում գտնվելու մասին և ուզում են վանքը գնդակոծել: Ռուսաց հյուպատոսը առակել էր թուրք կառավարության այդ որոշմանը, քանի որ վանքում որբեր կային և նրանք անմեղ էին, և թե այդ վանքը ոչ միայն հայերին է պատկանում, այլ ամբողջ քրիստոնյա ազգին:Մուշի և Առաքելոց վանքի միջև անցուդարձը դադարել էր: Վանահայրը Մուշում էր մնացել, իսկ որբերը և վանքի աշխատավորները փակված էին վանքում: Վանքի տնտես մայրիկը, որ 80 տարեկան ծերունի կին էր, Անդրանիկն իր մոտ է կանչում և պատվիրում, որ պարզի՝ վանքի մեջ որքան ալյուր, հաց, միս, կուրկուտ կար, և հայտներ իրեն:Վանքում գտնված պաշարը մեկ ամիս միայն կբավարարեր: Հավանական էր, որ վանքի ջուրը կտրեն, ուստի միաբանությունը և զինվորները պետք է ջրով լցնեն գինու կարասները և Մատաղի կաթսաները, որպեսզի առատ ջուր ունենային:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 25-27:

Ջրի հարցը լուծված էր: 6 Նոյեմբերի 7-ին ժամը 7-ի կողմերը վանքի հովիվները լուր բերեցին, թե երեք տարբեր տեղերից թուրք կանոնավոր հազարավոր զինվորներ դեպի վանք էին շարժվում: Երկու հարյուր քայլի վրա թուրք զինվորները սկսեցին երևալ: Այս զինվորները քայլում էին վարանոտ և երկյուղած: Երբ տեսան, որ հայերի կողմից կրակ չի բացվում՝ սկսեցին այս ու այն կողմ շրջել: Երբ վանքի մեծ դռանը մոտեցան, մյուս զինվորներն էլ հետևեցին նրանց և եկան վանքի գոմի մեջտեղում գտնվող մեծ կալը: Մուհամեդ էֆենդին սկսեց գոռալ, ասելով որ ինքը հայից իսլամ դարձած էֆենդի է և ուզում էր իմանալ, թե ինչու է վանքի դռները փակ: Անդրանիկը կանչում է Գևորգին, Վաղարշակին, Հաճի Հակոբին և ասում, որ երբ զանգակի ձայնը լսեն իսկույն կրակեն: Եվ կրակի ձայները Հարությունն էլ կլսի և զգուշ կլինի: Դարձյալ Հաճի Հակոբնն ու Գևորգը պնդում են, որ նախայարձակ իրենք չլինեն ավելի գրգռելու թուրք կառավարությանը՝ թնդանոթներ բերելու: Անդրանիկը պնդում էր, որ իրենց վրա միայն լեռնային թնդանոթ կարող էին բերել և այն էլ ոչ մի վնաս չէր տա իրենց: Դարձյալ տեղի տվեց նրանց խնդրանքին հետևելով դրսի անցուդարձին: Այս խոսքերի վրա Մեհե և Մուհամեդ էֆենդին իրենց հետ գտնված զինվորներով ետ են դառնում դեպի գոմի ետև՝ Իշխանաց Աղբյուրը և Աստվածածնի Աշտարակը: Թուրք զինվորները իրենց դիրքերը քաշվեցին, իսկ Մեհեն և իր ընկեր զինվորները Աստվածածնի մատուռի պատը ծակեցին և ներս մտան: Թշնամին յուրաքանչյուր զինվորի համար երեք տարբեր դիրքեր էր պատրաստել: Նրանք պետք է մի դիրքից խփեին և մյուսին անցնեին:[7]

Ժամը 3-ին մոտ լսվում է հայդուկների հրացանների ձայնը: Անդրանիկը հրամայում է, որ խիստ կրակ բանցեն Թադեոս Առաքյալի առվի ծառերի վրա: Այս ուժեղ կրակի տակ Հարությունը կարողանում է ընկերների հետ վանքի դռան առջև հասնել: Հարությունի վերին սրունքը վիրավորված էր: Գելիեգուզան գյուղից Ղազարը վիրավորված ընկել էր գոմի ետևի մասում: Ղազարը դրսից շարունակ գոռում էր, որ փաշան չդադարեցնի կրակը: Անդրանիկը մտածում էր, որ եթե դուրս հանի 8-10 տղաների, մեկին ազատելու համար ուրիշներին էլ կվտանգի, հրամայում է, որ օձի պես սողա և փախչի թուրք զինվորներից: Հայերի կրակից թշնամին ահաբեկած փախել էր: Այս քաջալերանքի վրա Ղազարը դեպի վանք շարժվեց և հասավ Թադեոս Առաքյալի աղբյուրը:

[7] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 38:

Հայերի դիրքերից երևում էր Ղազարը: Նա ոտքի ելավ և սկսեց քայլել դեպի վանք: Գոմից թուրք զինվորները դուրս եկան, որ Ղազարին բռնեն: Երբ վանքից այս ամենը տեսան՝ թուրք զինվորների վրա խիստ կրակ բացեցին: Կրակին տակ թուրք զինվորները դեպի գոմը փախան և Ղազարը կարողացավ հասնել վանք: Ղազարի վիճակը շատ ծանր էր: Շարունակ ջուր էր ուզում: Հարությունի վերքնել էր ծանր: Վերին սրունքից էր վիրավորվել և վերքը 30 սանտիմետր բացվածք ուներ: Հարությունն այնքան քաջ ու հանդուգն էր որ անտեսել էր Անդրանիկի պատվերը և արհամարհելով թշնամուն օգնության էր եկել: Երբ Ծիր կատարին էին հասել տղերքին չէին գտել: Եվ եթե վանքը պաշարված չլիներ նրանք պետք է գնային և դիմավորեին: Հարությունի ընկերները նրան ասում են, որ պետք է գնալ Փաշայի նշած ճանապարհով բայց նա անընդհատ ասում էր որ մի քիչ էլ գնան առաջ և ամեն ինչ պարզ կլինի: Երբ լսվում է թուրքական կրակների ձայնը: Հարությունը Սարգսին և Ղազարին պատվիրում է իր հետ գնալ խուզարկության, իսկ մնացածը հետ քաշվեն: Հարությունը իր երկու ընկերների հետ լսում է հայերեն խոսող քրդերի ձայնը: Նրանք նկատել էին հայերի առաջխաղացումը և երբ մոտեցան Հարությունին խոսք ուղղեցին թե ինչու կանգ առան, բոլորը գոմի մեջ են: Հարությունը անծանոթ ձայները ճանչելով տղաներին ասում է, որ սրանք թուքեր են: Թուրք զինվորներ էլ կրակ էին բացել ճիշտ նույն ուղղությամբ: Գոմի հետևի փոքր բլրակի վրա տասնհինգ քար կար, այդ քարերի հետևում թաքնված թուրք զինվորներն էին հենց վիրավորել Ղազարին և Հարությունին:Նոյեմբերի 7-ին, երբ թուրք զինվորները պաշարել էին վանքը, Անգլիացի հյուպատոսը Մուշ քաղաքը թողած Բիթլիս էր մեկնել: Ռուս և անգլիական հյուպատոսների մեջ պայքար էր սկսվել: Ռուս հյուպատոսը ամեն ջանք չէր խնայում հայ ժողովուրդին Օրթոդոքս եկեղեցուն կապել, ուստի նրա հաջողությունները բարենպաստ չէին անգլիացի հյուպատոսի համար: Թուրք պաշտոնյաները և ռուս հյուպատոսը մտածում էին, թե Անդրանիկը հրաման և ռազմամթերք ստանում է անգլիական հյուպատոսից, ուստի ամեն գնով իրար դեմ լցված էին ատելությամբ: Նախկին հեղափոխական Արաբոյի հայրը ճերմակ մորուքով, 95 տարեկան ծերունի էր: Կռվի նախօրյակին նրան գոմից վանք են բերում՝ գնդակներից պաշտպանելու 8-ի առավոտյան գոմի առջև կարմիր հետքեր էին երևում: Տղաներից գոմ գնացին և իրենց հետ բերեցին Արաբոյի հորը: Նա պատմում էր, որ գիշերը 7 դիակ էին բերել: Թուրք զինվորներից մեկը փորձեց սպանել նրան, բայց մի մարդ թույլ չտվեց: Եվ այդ ամենից պարզ էր, որ նա հայ էր, որն ընդունել էր իսլամը:Այդ օրը Ղազարն իր հոգին ավանդեց: Զանգակատան մոտ փորվեց նրա գերեզմանը:

Երկու օր անց բնական մահով Արաբոյի հայրն էլ մահացավ ու նրան էլ թաղեցին:Նոյեմբերի 12-ին ցրտեց և սկսեց ձյուն գալ: Վանքը շրջափակած վեց հազար թուրք զինվորները ձմռան բուքից պաշտպանվելու համար մոտակա հայ գյուղերից վեց հարյուր լծկան եզներ բերեցին իրենց ծառայեցնելու և գետնափոր տներ ու դիրքեր պատրաստելու համար:[8] Մուշից և նրա շրջաններից հայ վարպետներ և գյուղացիներ էին բռնի բերել, որպեսզի պատրաստեն շինությունները: Վեց գիշերվա մեջ 196 գետնափոր տներ շինվեցին: Նրանք աշխատում էին գիշերով, քանի որ ցերեկն աշխատելով պիտի կրակահերթի ենթարկվեին: Ուստի միայն մթից պիտի օգտվեին: Թուրք զինվորների դիրքերը հազիվ վանքի պարսպից 200- 250 քայլ հեռու էին:

Նոյեմբերի 12-ի առավոտյան կեղծ ցույց կազմակերպեցին թուրքերը: Իրենց դիրքերից քիչ այն կողմ փայտերի վրա գլուխներ էին դրել: Հայ տղաներն էլ կարծում էին թե թուրք զինվորների գլուխներ են և անվերջ կրակում էին այդ ուղղությամբ: Շուտով Անդրանիկը տեղեկանում է այդ խաղի մասին և հրամայում, որ դադարեցնեն կրակը:Այդ կեղծ խաղից հետո լսվում է մուրճի ձայն: Թուրք զինվորները կարողացել էին Աստվածածնի Աշտարակի արևելյան սեղանի կողմի պատը ծակել և ներս մտնել: Թանձր մութ մշուշի պատ կար հայերի և թուրքերի մեջտեղում: Երբ մշուշը քաշվեց, ամեն ինչ արդեն տեսանելի էր դարձել: Հայերը իրենց հրացանները ուղղելով դեպի թուրք զինվորիներին՝ սպանեցին թուրք հարյուրապետին, որ սրտնեղած իր զինվորների ապիկար մուրճի հարվածներից, ինքն անձնամբ ձեռքն էր առել մուրճը և դռան վրա հրացանի ծակեր էր բացում: Վեց հազար զինվորներ՝ ամեն դիրքերում տեղակայված, կարծում էին թե կարող են հայերին իրենց ձեռքի տակ պահել: Նրանք վստահ էին թե այսօր կամ վաղը իրենց ձեռքը կվերցնեին հայերին և նրանց գլուխները ձողերի վրա անցկացնելով կցուցադրեին Մուշի և Բիթլիսի հրապարակներում:Նոյեմբերի 17-ի կռիվը անհամեմատելի էր նախորդ կռիվների հետ: Ցանկացած տեղից վեց հազար հրացան ահավոր ձայներով գալիս և զարնվում էր վանքի պարսպին և գմբեթին, պատասխան ընդունելով միմիայն մի քանի հրացանների հաշված փամփուշտներ: Ոչ թուրքական հրացանները, և ոչ էլ ցուրտն ու քամին չէին կարող սարսափեցնել և մարել կրակը հայերի սրտի մեջ: Անհրաժեշտ էր սպաննել՝լուծելու համար ընկածների վրեժը:

[8] Տե՛ս Լյուլեճյան Լ., Անդրանիկի բերանով Առաքելոց վանքի կռիվը, Պեյրութ, էջ 45:

Հայերը երբեք չընկճվեցին, այլ ամեն կերպ փորձում էին հոգնեցնել թուրքերին և ընկճել: Ռազմական ուժով ֆիդայիներին տապալելու անհաջող փորձից հետո թուրքերը դիմեցին դիվանագիտական խորամանկության: Նրանք մի հայ կնոջ միջոցով հաղորդագրություն ուղարկեցին վանք: Գրության մեջ կառավարության կողմից հարց էր. «Ի՞նչ եք ցանկանում: Որն է ձեր նպատակը և որո՞նք են ձեր պահանջները»:[9]

Անդրանիկը պատասխանեց, որ նա չի կարող բացատրել իր պահանջները գրությամբ: Փոխարենը նա ցանկանում էր, որ Մուշի քաղաքապետի ուղեկցությամբ զորահրամանատարներ Ֆերիդ փաշան և Ալի փաշան ներկայանան վանք, որտեղ նա կարող է բանավոր կերպով նրանց ներկայացնել իր պահանջները: Նոյեմբերի 19-ի գիշերը թուրքերը կատաղի հարձակում են գործում վանքի վրա: Ֆիդայիները պատասխան կրակ են արձակում երեսուն յոթ ատրճանակներով: Մութ գիշեր էր, խիտ մառախուղը պատել էր Մուշի հարթավայրը, իսկ ձյունը շարունակաբար գալիս էր: Անդրանիկը կասկածեց, որ թուրքերը կարող են օգտվել մթությունից և թնդանոթներով կոտրել մեծ դարպասը՝ ներս ներխուժելու համար: Մեծ դուռը, որ կրկնակի փեղկ ուներ, ծածկված էր մետաղյա և մեծ երկաթե մեխերով: Անդրանիկը անձամբ էր հսկում դուռը ողջ գիշեր: Այլևս ոչ մի մտահոգություն և վախ չունեին թնդանօթի կրակից: Ամրացված այդ դուռը այդպես մնաց մինչև 1908 Օսմանյան սահմանադրության օրերը:Օգտվելով թանձրախիտ խավարից՝ գիշերը թուրքերը ախոռի պատին անցք փորեցին, լուռ ներս մտան և զբաղեցրին ախոռի և խոտամբարի միջև ընկած հատվածը՝ ֆիդայիներից յոթանասուն քայլ հեռավորության վրա: Հանկարծակի հայհոյելով քրդերեն լեզվով՝ մի զինվոր բղավեց ֆիդայիներին, «Անդրանիկ Փաշա, Անդրանիկ Փաշա ես Մարդինից եմ, Հասսանի հայրը: Որտեղ ես փախնելու իմ ճանկերից»: Անդրանիկի բացակայության ժամանակ Գևորգը պատասխանեց քրդերեն, «Ես Փոքր Գևորգն եմ և Հասսանի մոր սիրեկանը: Ո՞նց ես վիզդ ազատելու իմ ճանկերից»: Լռություն տիրեց: Այնուհետև տղամարդը հարցրեց թուրքերեն. «Գևորգ Չավուշ (տասնապետ), այդ դու՞ ես»:[10] Այդ պահից ի վեր Գևորգը հայտնի էր «Գևորգ Չավուշ» անվամբ:

[9] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 52:

[10] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 54:

Գևորգը մի քանի հայհոյանքներից հետո գոռաց, թե նրանք պետք է գնան սոխ ու սխտոր ծախեն, իրենք ուր կռիվը ուր: Վանքը հինգ հատ գազանի պես շներ ուներ: Թուրք զինվորները սպանել էին չորսին և մեկը վիրավոր ընկած էր վանքի պատի տակ:Գնդակը ջախջախել էր Հարությունի սրունքի ոսկորը և մկանները: Օր օրի վերքը նեխում էր: Ապրելու որևէ հույս չկար, բայց ոչին չէր խնայվում Հարությունի համար: Նոյմեմբերի 20-ի գիշերը արդեն վատթարացել էր Հարությունի վիճակը. անընդհատ ջուր էր խմում: Առավոտյան հոգին ավանդում է: Երգելով ու աղոթելով, խաչով ու խունկով Ղազարի նման թաղում են նրան Սուրբ. Գևորգի մատուռի առջև:Փամփուշտներն արդեն վերջանում էին, ուստի նոր փամփուշտներ էր անհրաժեշտ: Գործի լծվեցին և այդ գիշեր 5000 փամփուշտներ լցրեցին հաջորդ օրվա հարձակմանը դիմադրելու համար:Նոյեմբերի 22-ին կեսօրը երկու կողմերը դադարեցին կռվել: Ավագ քահանա Հովհաննես վարդապետի ուղեկցությամբ այն նույն կինը, ով բերել էր առաջին գրությունը, բերեց մեկ այլ գրություն: Այս կնոջն ընկերակցում էր վանքի վանահայր Հովհ. Վարդապետը: Մուշից էին գալիս նրանք, իրենց հետ նամակ բերելով: Վանահայրը և կինը վանքի դռան առջև հասան: Դողդոջ ձայնով վանահայրը ասաց. «Աստված օրհնի, Աստված օրհնի, ինչ պիտի լիներ մարդկանց վիճակը, չորս կողմը շրջապատված էր արյունով: Աստվածածնի մատուռիը արյունով ծածկված էր: Թուրք սպանվածներին ու վիրավորներին գիշերով Մուշ էին բերում՝ թուրք ժողովրդին չհուսալքելու համար»:[11]

Անդրանիկը հարցնում է վարդապետին, թե թուրք զինվորները որ կողմում էին կենտրոնացած և թե այդ զորքերի հրամանատարի վրանը ո՞ր կողմում Էր գտնվում: Վարդապետը պատասխանում է, որ ամեն կողմում էլ զորքերը լցված էին: Հրամանատարի վրանը Խև Հովհաննու Քարերն էին: Այնուհետև կարդում է նամակը, որտեղ ասվում էր. որ Սուլթան Համիդը հրամայել է, որ Մուշի քաղաքապետը, քահանա Խոսրով Բեհրիկյանը, Մուղդադ էֆենդին և Մուհամմեդ էֆենդի գնան վանք՝ լսելու հայերի բողոքներն ու պահանջները և ներկայացնելու իրենց հաշվետվությունը Կուստանդնուպոլսում գտնվող կառավարությանը»:[12]

[11] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 59:

[12] Տես նույն տեղում, էջ 60:

Անդրանիկն ընդունեց առաջարկը: Հովհաննես վարդապետն ու կինը նամակը ստանալով հեռացան վանքից: Մեծ քանակությամբ փամփուշտներ ունենալու տպավորություն ստեղծելու համար նա քառասուն դատարկ մոմի արկղներ է դնում պատի երկայնքով: Իրականում միայն վերևի շարքն էր պարունակում փամփուշտներ, որոնք ֆիդայիները լիցքավորել էին նախորդ գիշեր: Նա նաև փամփուշտ լիցքավորելու սարքերն ու բրիտանական և տեղական արտադրության վառոդների պայուսակներն էր գցել այս ու այն կողմ՝ թուրք պատվիրակների վրա տպավորություն թողնելու համար:Նոյեմբերի 23-ին ժամը 6.30-ին թուրքական փողերը դարձյալ հնչում են: Մի քանի վարկյան անց մի քանի անզեն մարդիկ են գալիս դեպի հայերի կողմը: Երբ խումբը Աստվածածնի մատուռի առջև հասավ՝ նրանք մի քանի վարկյան խոսեցին թուրք զինվորների հետ: Երբ հասան դռան առջև, իսկույն փաշան Վաղարշակին ու Բարսեղին ուղարկեց, որ վանքի փոքր դուռը բացեն և հրավիրեն դեպի Առաջնորդարան: Անդրանիկը տեսնելով գոռում է, ասելով, թե կամ ներս մտնեն կամ հեռանան և եթե ուզենային կրակել մինչ մոտենալը կկրակեին: Պետք է հասկանան, որ երբ հայերը խոսք են տալիս, ամեն գնով իրենց խոսքը հարգում են: Առաջնորդարան մտնելուց և բարևելուց հետո սկսեցին իրենք իրենք ծանոթացնել, Մուղտատ էֆենդի, Մուհամեդ էֆենդի, Առաջնորդը և վանահայրը: Մուղտատ էֆէնդին վախից դողում էր: Երբ Մուղտատի այդ վիճակը տեսավ փաշան ասաց, որ իրենց ապահով զգան և չվրդովվեն: Խոսրով Վարդապետ իր աջը երկարեց Անդրանիկին, որպեսզի համբուրի, Անդրանիկը կարամելով համբուրեց աջը: Անդրանիկը վանահայր Հովհ. Վարդապետին շատ երկար տարիներ ի վեր ճանչում էր և շատ անգամներ վայելել էր նրա հյուրասիրությունն ու բարեկամությունը: Հայությունից դարձած Մուհամեդ էֆենդին քմծիծաղով Անդրանիկի սխալներն էր շտկում՝ երբ Հովհաննեսին Խոսրով և Խոսրովին Հովհաննես էր ասում:

Դողացող ձեռքերով Մուղդադ էֆենդին գրառեց Անդրանիկի կողմից նշված պայմանները: Այսպիսով՝

1. Քաղբանտարկյալները պետք է ազատվեին:
2. Հայերն իրենք պետք է հավաքեին տաս տոկոսանոց հարկերը՝ իրենց հետ ունենալով բարեխիղճ թուրք պաշտոնյա:

3. Այն քրդերը, որոնք միշտ հարձակվում էին հայկական գյուղերի վրա պետք է զինաթափարվեին և պաշտպանեին գյուղերը:
4. Պետք է վերադարձնեին քրդերի կողմից բռնագրավված բոլոր հայկական գյուղերն ու հողերը:
5. Հայ գյուղացիներից հարկեր հավաքող բոլոր քուրդ ավազակապետերը պետք է դադարեցնեին այդ հարկերի հավաքագրումը: Պետության մեջ մեկ այլ պետություն գոյություն ունենալ չէր կարող:
6. Կառավարությունը իր իսկ շարքերում պետք է փնտրի ավազակների, քանի որ հայերը՝ մասնավորապես հայդուկները ավազակներ չէին: Երբեք խաղաղ բնակչությանը չեն վնասել, բայց պատժել են Բշարե Խալիլին, ով հայ ժողովրդի դեմ վայրագություններ էր կատարում: Նա էր, որ Սերոբ փաշայի գլուխը կտրեց, կոտորեց Տալվորիկի Սպաղանաց գյուղի 27 կանանց և երեխաներին: Երբ նրանց դիակները թաղված էին հայ գյուղացիների կողմից, 48 ժամ հետո հանեց դիերն ու Մակարի տան մեջ լցնելով վառեց՝ նրանց հետքերը անհետացնելու համար: Հեթինկ գյուղից յոթ երիտասարդներ բռնելով՝ կապեց նրանց թևերը և գետը իջեցնելուց հետո՝ հրացաններով բոլորի վրա կրակեց: Այս բոլորը կատարվեցին թուրք կառավարության թելադրանքով: Թուրք կառավարությունը միացած Խելիլի հետ՝ այս ոճիրները գործադրեց և Սուլթան Համիդը նրա կուրծքը զարդարեց: Ահա այսպիսի հրեշներին էին պատժելու փոխարեն վարձատրում շքանշաններով և ընծաներով: Երեք տեղերից շրջափակելով Խելիլի ճամփան կտրել էին, հարցաքննությունից հետո փաշան կտրում է նրա գլուխը: Եվ ահա Սուլթան Համիդի տված պատվանշանն էլ սա էր: Խելիլին գլուխը կտրելուց հետո նրա հետ գործակցող ընկերներից տասնյոթ հոգին էլ սպանվեց: Նրա յուրաքանչյուր քայլը լիովին վայելում էր կառավարության աջակցությունը: Այդ հրեշները փոխանակ պատժվելու, կառավարության կողմից պարգևատրվում են մեդալներով և նվերներով: Մեկունք գյուղի շերիֆի սպանության համար թուրքերը բանտարկեցին տասնհինգ անմեղ հայերի և ստիպեցին նրանց թույն խմել.Այնուհետև կալանավորեցին ևս հարյուր յոթանասուն անմեղ մարդու՝ հայերի և բանտ նստեցրեցին: Եվ հիմա հարցնում են՝ «Ինչո՞ւ եք դուք այստեղ և ինչ եք ցանկանում»:

Դիարբեքիրից մինչև պարսկական սահման 150,000 զինված քրդեր կան: Ինչո՞ւ են նրանք զինված և ո՞մ դեմ: Նրանց զինել են հայերի գլխին պատուհաս դառնալու համար: Եթե արդարություն կա, ապա ո՞րտեղ է այն: Ինչո՞ւ եք բանտարկում անմեղ հայերի: Ինչո՞ւ չեք բանտարկում քուրդ մարդասպաններին: Ինչո՞ւ է նրանց թույլատրվում ազատորեն զենք կրել: Թուրքերը կախեցին Մարգար վարժապետին, բանտարկեցին Դամադյանին և Համբարձում Բոյաջյանին և հիմա հայերն այստեղ են: Եթե չընդունեն պայմանները, բավականաչափ զինամթերք կա վեց ամիս դիմադրելու համար:Անդրանիկը ընդգծեց իր վերջնագիրը՝ մատնանշելով դատարկ տուփերը: Քանզի թուրք ներկայացուցիչները չգիտեին, որ մոմերի սնդուկները դատարկ էին: Նրանք այն տպավորությունը ստացան, թե այդ քառասուն սնդուկները լցված էին ռազմանյութերով: Այս ամենը պետք է վավերացվի Սուլթանի և օտար դեսպանների կողմից, այնուհետև նոր կանցնեն հաջորդ փուլին: Եթե հեռագրեն փաշայի խոսքերը, քսանչորս ժամից Պոլիս կհասնի, երկու օր խորհրդակցելուց հետո՝ նրանց պատասխանը 13 օրից փոստով կհասնի, իսկ եթե որևէ բան այն չլինի ամեն ինչ կմերժվի:Բանակցությունները տիրեցին ընդհանուր առմամբ երեք ու կես ժամ: Ի վերջո, մինչև Կուստանդնուպոլսից պատասխան ստանալը, Մուղդադի էֆենդին առաջարկեց հրադադար կիրառել:

«Հայտնեցեք ձեր զինվորականներին, եթէ իրենք հարգեն իրենց խոստումները, ես էլ կը կհարգեմ, եթե կրակեն ես էլ կկրակեմ»: [13]

Այս խոսակցությունն ինքնին արդեն նշանակում էր զինադադար: Ժամը 10.30-ին «մնաս բարով» ասելով մեկնեցին: Դուրս գալուց առաջ Անդրանիկը հիշեցրեց իրենց այն խոստումը, որ նախապես քննարկել և խոստացել էին: Այդ պահին էր, որ Պեհրիկյանը հայերենով դարձավ և ասաց, որ այդ պահանջները մեկ օրվա, մեկ շաբաթվա և մեկ տարվա գործ չի, այլ տարիների: Հայդուկապետը Խելիլի սպանության պատմությունը մասնավոր նպատակով պատմեց թուրք ներկայացուցիչներին, քանզի կառավարությունը 31 հայերի բանտարկելով ծեծի և չարչարանքի էր ենթարկել, այն պատրվակով, թէ այս նոր բանտարկվածները մասնակից և պատասխանատու են Խելիլի սպանության համար: Այս պատմությունը դիտմամբ պատմեց, հասկացնելու համար, որ ինքն ու իր զինուորներն էին կատարել Խելիլի սպանությունը և պատասխանատուն իրենք են և ոչ թէ մի քանի անմեղ հայեր: Ինչպես և ակնկալվում էր այս պատմության արդյունքը՝ երեք օր հետո այդ 31 անձանց հեռագրով ներում շնորհվեց Կ. Պոլսից:

[13] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 64-70:

ԳԼՈՒԽ 2

2.1 ՀԱՅԴՈՒԿՆԵՐԻ՝ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Քսան օրվա կռիվների պլանն արդեն արձանագրված էր Վանի, Բիթլիսի, Կարնինի, Խարբերդի և Տիգրանակերտի նահանգներում: Քուրդ, թուրք և հայ ժողովուրդներն այն համոզումն ունեին թե հայ ժողովրդի համար ազատություն չկա երբեք:Երբ հայդուկներն իրենց պայմանները ներկայացրեցին թուրք ներկայացուցիչներին, այդ վայրկյանից իսկ սկսած գիտեին, որ իրենց առաջարկներն ու պայմանները անընդունելի էին: Երկու կողմն էլ խաղ էր խաղում որպեսզի ժամանակ շահեր: Չնայած հրադադարի ռեժիմին՝ հաջորդ օրը՝ նոյեմբերի 24-ին, թուրքերը ուժգին հարձակում գործեցին: Հայերը սովորականի պես կազմ ու պատրաստ կանգնած էին իրենց դիրքերում:

«Մահմուտ, Հասան, Մուսթաֆա, այս ինչ ցուրտ է, այս ինչ մահեր են որ կը պատահին ամեն օր, սա «ճան ֆէտայիներն» ալ չեն անցնիր և երթար որ մենք ալ ազատինք իրենք ալ»:[14]Ձմեռը մի անհասկնալի հիվանդություն էր բերել թուրք զինվորներին: Այս հիվանդությունը այնքան մեծացավ և տարածվեց 6000 թուրք զինվորների մեջ, որ կառավարությունը Երիզայի 4րդ զորաբանակից և Կ. Պոլսից նոր բժիշկներ բերեցին:Քսան օրվա դիմադրության ընթացքում հայկական կողմն էլ հիվանդներ ունեցավ:Ռազմանյութը, ծխախոտը արդեն վերջանում էին: Վախ կար, որ զինվորներն էլ կհիվանդանան կամ կվարակվեն: Ուստի պետք էր մի բան մտածել և մի ճանապարհ մտածել վանքից դուրս գալու համար: Քսան օրվա այս դիմադրությունը մի փոքր չափով օգտակար էր հայ ժողովրդի համար: Եթե քսան օրվա անհավասար դիմադրությունը օտար դեսպանների ուշադրությունը նույնիսկ չէր գրավել, գեթ մտահոգություն էր պատճառել թուրք կառավարությանը՝ պատասխանատվություններից զգուշանալու համար: Դիրքերը բաժանված էին չորս խմբերի մեջ՝ հսկելու և պարտականությունները կատարելու համար: Երեք ժամ Գևորգ Չավուշն էր հսկում, երեք ժամ Վաղարշակը, երեք ժամ Հաճի Հակոբը և երեք ժամ էլ Անդրանիկը: Նոյեմբերի 26-ի խստաշունչ առավտո էր:

[14] Տե՛ս Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 73:

Անընդհատ տեսնելով հիվանդ որբերի, հիվանդ զինվորների և այն անտանելի կացությունը, որին պիտի մատնվեին ռազմամթերքի պակասի պատճառով,հայդուկապետը վճռական որոշում կայացնելով՝ իր մոտ կանչեց Գևորգին, Վաղարշակին և Հաճի Հակոբին: Իրենց կացությունն ու վաղվա բոլոր դժվարությունները բացատրելուց հետո, ասաց որ պետք է դուրս գան վանքից: Թուրքերը կեղծ թղթով փորձում էին խաբել, ուստի պետք էր, որ գիշերով անցնեին թուրք զինվորականների շղթան:

Հնարավոր էր, որ թուրքական կառավարությունը միամիտ լիներ և հավատար Անդրանիկի խոսքերին, որ իրենք պետք է վանքում մնան 6 ամիս մինչև որ հայերի պահանջները կկատարվեին, այնուամենայնիվ հայդուկները որոշել էին հեռանալ վանքից:Հայդուկները ցանկացան իմանալ փաշայի կարծիքը, թե արդյոք նրանք կարող են ապահով և անվնաս դուրս գալ վանքից, իսկ Անդրանիկը պատասխանեց, որ 99 տոկոսով բոլորն էլ կարող են ապահով դուրս գալ և որևէ մեկի քիթը չպիտի վնասվեր, եթե միայն անփորձ զինվորները հետևեին իրենց և սխալներ չգործեին: Դիրքերի մեջ փորձառու զինվորներ պետք էր դնել և կանչեին բոլոր առաջարկներն ու պայմանները անընդունելի էին: Երկու կողմն էլ խաղ էր խաղում որպեսզի ժամանակ շահեր:Չնայած հրադադարի ռեժիմին՝ հաջորդ օրը՝ նոյեմբերի 24-ին, թուրքերը ուժգին հարձակում գործեցին: Հայերը սովորականի պես կազմ ու պատրաստ կանգնած էին իրենց դիրքերում:

Անընդհատ տեսնելով հիվանդ որբերի, հիվանդ զինվորների և այն անտանելի կացությունը, որին պիտի մատնվեին ռազմամթերքի պակասի պատճառով,հայդուկապետը վճռական որոշում կայացնելով՝ իր մոտ կանչեց Գևորգին, Վաղարշակին և Հաճի Հակոբին: Իրենց կացությունն ու վաղվա բոլոր դժվարությունները բացատրելուց հետո, ասաց որ պետք է դուրս գան վանքից: Թուրքերը կեղծ թղթով փորձում էին խաբել, ուստի պետք էր, որ գիշերով անցնեին թուրք զինվորականների շղթան:

Հնարավոր էր, որ թուրքական կառավարությունը միամիտ լիներ և հավատար Անդրանիկի խոսքերին, որ իրենք պետք է վանքում մնան 6 ամիս մինչև որ հայերի պահանջները կկատարվեին, այնուամենայնիվ հայդուկները որոշել էին հեռանալ վանքից:Հայդուկները ցանկացան իմանալ փաշայի կարծիքը, թե արդյոք նրանք կարող են ապահով և անվնաս դուրս գալ վանքից, իսկ Անդրանիկը պատասխանեց, որ 99 տոկոսով բոլորն էլ կարող են ապահով դուրս գալ և որևէ մեկի քիթը չպիտի վնասվեր, եթե միայն անփորձ զինվորները

հետևեին իրենց և սխալներ չգործեին: Դիրքերի մեջ փորձառու զինվորներ պետք էր դնել և կանչեին բոլոր զինվորներին վանքի հրապարակ, որպեսզի հայդուկապետը դասավորեր նրանց Չավուշի, Վաղարշակի և Հակոբի խմբապետության տակ: Նոյեմբերի 27-ին գիշերը ժամը տասին պետք է դուրս գային վանքից: Գևորգ Չաուշը, Սեյթո Պողոսը, Վարդանը, Հովսեփը և ինքը Անդանիկը պետք է առաջինը դուրս գային՝ խումբը գլխավորելու: Նրանք պետք է քայլեին դեպի թուրքական դիրքերը: Յուրաքանչյուր ոք պետք է փաթաթված լիներ սպիտակ սավաններով կամ եկեղեցու սպիտակ թիկնոցներով, որպեսզի ձյան մեջ աննկատ լինեին: Հաճի Հակոբը և Բարսեղը պետք է քայլեին խմբի առջևում, իսկ Սարգիսն ու Վաղարշակը խմբի ետևում: Յուրաքանչյուրը պետք է իր կողքի ընկերոջը լավ ճանչեր, ինչպէս նաև իր առջևից քայլող զույգին: Խմբի հետևից պետք է քայլեին Վաղարշակն ու Սարգիսը: Հայդուկները ծնկի պիտի գային և անշարժանային, այնուհետև նույն բանը անեին նաև նրանց հետևից եկողները: Նրանք գնալու էին դեպի Արծվասար, որտեղ Արաբոն էր մնում: Պետք է գնային դեպի հովիտ և այնուհետև անցնեին մյուս կողմը՝ դեպի Միրկոյի ախոռը, որը դիմացի լեռան սարալանջի վրա էր: Բոլոր հին զինվորները գիտեին այդ գոմը, ուստի նորեկներին էլ պետք է ցույց տային այն: Եթե հանկարծ որևէ իրարանցում և կռիվներ պատահեր և խումբը մասերի բաժնվեր, ամեն մի խումբ կամ մաս, գոմի առջև ձյան վրա ձեռնափայտ պետք է խրեր ի նշան իրենց անցած լինելուն: Քանզի քամիները կարող էին այնքան ուժգին լինել, որ մաքրեին ձյան վրա իրենց ոտնահետքերը, և ձյան վրա ձողեր տնկելով միմյանց չէին կորցնի: Նոյեմբերի 27-ին հինգ հոգով, դուրս գալով խմբի առջևից՝ պետք էր կրակեին առաջին իսկ հանդիպած թշնամուն, իսկ Հաճին իր խմբով պետք է անցներ Արաբոյի և Արծվի քարերը և կրակ բացեր: Եթե նրանց հրացանների ձայնը լսվեր անպայման օգնության պետք է գնային նրանց: Այս բոլոր հրահանգները տալուց հետո, խումբը վարժեցնելու համար բակում փորձեր կատարեցին, տեսնելու թէ ըմբռնել՞ են իրենց անելիքները: Այդ ամենից հետո Անդրանիկը կրկին անգամ հարցնում էր, թե արդյոք խումբը հասկացել է իրենց անելիքները և այնուհետև հրահանգեց որպեսզի կանչեն ուսուցիչներին և որբերին: Երբ ուսուցիչներ եկան, նրանց ևս պատմեց նպատակը և ներկայացրեց, որ ձևականության համար ծեծի պետք է ենթարկվեին իրենց որբերի առջև և բանտարկվեին, որպեսզի նրանք ազատվեին պատասխանատվությունից: Քանի որ կառավարությունը ասելու էր, թե եթե նրանք բարեկամ էին կառավարությանը, ինչո՞ւ զանգակը չէին քաշել և ձայն չէին

տվել, երբ ֆիդայիները լքեցին վանքը: Այդ պատճառով դուռը պետք է կողպեր իրենց վրա և բանալիների տեղը միայն 80 տարեկան տնտես մայրիկին էր ասելու: Զինվորները նույն փորձերը դարձյալ կրկնեցին՝ հասկանալու համար, թե արդյոք խումբը կատարյալ կերպով ըմբռնել է ամեն ինչ և արդյոք գիտի իր անելիքները: Հայդուկապետը հանձնարարեց, որ խումբը երկու օրվա հաց դնի իրենց տոպրակների մեջ և պատրաստ լինի մեկնելու ճիշտ ժամանակին:Երեկո էր: Թուրք զինվորները իրենց պատնեշների հետևից՝ կրակներ վառած հսկում էին հայերի անցուդարձին՝ գետնափոր տան մեջ սեղմված: Պետք էր զգույշ լինել, պետք էր զգաստ և արթուն լինել ծրագիրը հաջողությամբ առաջ տանելու և թշնամուն ամոթի, զարմանքի և անակնկալի մատնելու համար: Պետք էր հայ հանճարը, հայ միտքը, իր ճարտար մտայնությամբ և հզոր սրտով ծիծաղեր և արհամարհեր թուրքական կառավարությանը: Պետք էր հաղթանակով թաղել թուրքական գահը և թուրք զինվորականը աշխարհի առջև ծաղր ու ծանակի ենթարկվեր:[15]Խումբը հանկարծակիի չբերելու համար, երեք հոգանոց երեք խմբեր ուղարկվեց եռանկյուն ձևով՝ երեք կետերի վրա դիրքեր բռնելու: Երեք հոգի գոմի անկյունում պետք է դիրք բռնեին, երեք հոգի Թադեոս Առաքյալի Աղբյուրում, երեք հոգի էլ վիթխարի ծառերի հետևում: Եթե մինչև ժամը երեքը թուրք զինվորներ հանդիպեին պետք է կրակեին, հրացանները վերցնեին և ներս մտնեին: Այն րոպեից, երբ խմբերը կուղարկվեին իրենց դիրքերը՝ 12 զինվորներ վանքի դռան առջև զինված դուռը բացած պետք է սպասեին, վտանգի պահին պետք է դիմեին նրանց, և նրանք կպաշտպանեին և ներս կթողնեին: Իսկ եթե որևէ դեպք չպատահի, ժամը ճիշտ 3:15 խումբը ճամփա կընկնի, իսկ նրանք իրենց դիրքը պետք է թողնեն և իսկույն գնան, միանան շարքին՝ նախապես որոշված իրենց տեղերում: Ութսուն տարեկան ծերուկ մայրիկը Անդրանիկի հետ էր: Նա, ծեր կնոջն ասում էր, որ երբ իրենք դուրս գան դուռը փակի: Վանքի դուռը չբացի, մինչև որ Ֆերիկ փաշան, վանահայրը և առաջնորդը չգան: Եթե թուրք զինվորներ սպառնան չվախենա: Եթե սանդուղքներ դնեն ու պարիսպից ներս մտնեն դարձյալ դուռը չբացի, որպեսզի թուրք զինվորները վանքը չկողոպտեն: Ծեր կինը համաձայնվում է Անդրանիկի ամեն մի ասածի հետ և օրհնում նրան:Անդրանիկը հրամայում է Գևորգին,Պողոսին, Վարդանին, Հովսեփին, որ հագնեն իրենց ճերմակ շապիկներն ու փաթաթեն գլուխները:

15.Տես Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը,Երևան,ԵՊՀ հրատ.,78:

Այն զինվորները որոնք նորեկ էին, հրաման տրվեց, պարպեն իրենց հրացանները, հրացանները լինեն էվգելի կամ չախմախլի: Հայդուկապետը Գևորգին հրահանգ տվեց, որպեսզի խուզարկի նրանց հրացանները: Գևորգը մեկ առ մեկ ստուգեց բոլորի հրացանները:Նրանք գնացին և համբուրեցին Հարությունի և Ղազարի գերեզմանոցները, որպեսզի հարգանքի տուրք մատուցեն իրենց մահացած ընկերներին: Ժամը 3-ն անց էր, երբ ծերուկ մայրիկը գիշերվա մութ ու մռայլին ճամփա դրեց խմբին: Հինգ ճերմակ շապիկներ հագած հայդուկները առաջ ընկան իրենց հետ վերցնելով վանքի դռան առջև սպասող տասներկու զինվորներին:Մի քանի քայլ անելուց հետո նրանց միացան երեք դիրքերի վրա հսկող տղաները և մտան արդեն իսկ որոշած շարքերը: Անդրանիկը անփորձ ու նորեկ զինվորներից մեկին հարցրեց, թե ինչ տեսավ նա իր շուրջը, որևէ շարժում կամ մարդ նկատել էր թե ոչ: Նա պատասխանեց, որ երևի թե մարդ կար: Այնուհետև փաշան նույնը հարցրեց Սեյտո Պողոսին: Իսկ Պողոսը ամենայն վստահությամբ բացասական պատասխան տվեց, պատճառաբանելով, որ դա քամու ձայնն էր:Հիսուն քայլ անելուց հետո Անդրանիկը և իր խումբը ծնկի էին եկել՝ ուշադրությամբ և խուզարկու հայացքներով, ստուգելու արդյոք շուրջը ձայներ լսվում էր, թե ոչ: Այնուհետև փախուստը նախաձեռնողը շրջվել էր ստուգելու արդյոք մնացածը ևս ծնկի էին իջել: Երեսուն քայլ դարձյալ առաջացել էին, նորից ծնկի իջել, աջ ու ձախ և կենտրոնը խուզարկելու համար: Այդ պահին մի թուրք ժամապահ մոտեցել էր նրանց և վախեցած ձայնով հարցրել, թե ովքեր են նրանք: Հայդուկների և թուրք զինվորների միջև հազիվ հինգ կամ վեց քայլ կար: Չորս ընկերների հետ հրացանները ուղղելով նրա կրծքին Անդրանիկը թուրքերեն պատասխանեց, որ չճանաչեց իրեն, ինքը Մեհմեդ Էֆենդին է, կես ժամ է խուզարկություններ էր կատարում, իսկ նրանք քնած էին: Ինչու նորմալ չէին հսկում ճանապարհները, որպեսզի ֆիդայիները չկարողանան փախուստի դիմել: Անդրանիկն իր խոսքերը հաստատելու համար, Գևորգին ուղղեց իր խոսքը, թե արդյոք քնած էին այս մարդիկ: Գևորգի պատասխանը միանշանակ այո էր: Հետևից եկող խմբի առաջապահները լսել էին նրանց խոսակցությունները: Անդրանիկը ձեռքով նշան էր արել տղաներին, որ հետևի դիրքերը բռնեին: Մի փոքր վարանեցին և ուշացավ դիրքերի հետևն անցնելը, ուստի օգտվելով այդ առիթից փաշան թուրք զինվորին հարցեր էր տալիս, թե ինչ էր նրա անունը, որտեցից էր, տեղացի էր և ո՞ւմ որդին էր: Այս խոսքերի վրա Անդրանիկի հրամանով խումբը երկրորդ նշանի վրա կարողացել էր անցնել իրենց կողքով: Նրանք փոխանակ Արաբոյի և Արծվի քարերն անցնելու, ձյան վրա

նստած թեքվել էին դեպի ձորը ու էլ չէին երևում: Երբ նրանք հասան Արծվասար, թուրքերը սկսեցին գոռալ՝ «Ֆիդայիները փախան, ֆիդայիները փախան» Այս խոսքերի հետ մեկտեղ թուրք զինվորները դուրս եկան իրենց բունկերներից և վրաններից և հրազենային կրակոցների տեղատարափ սկսեցին: 6000 հրացաններ սուլում էին օդի մեջ և ձյան ու բքի հետ խառնված իջնում էին դեպի ձորը, դեպի հայերի կողմը, անցնում նրանց կողքով, գլխի վրայով:Երբ արդեն առաջացել էին՝ տղաներից մեկն առաջարկեց փաշային դիրքեր զբաղեցնեն ժայռերի ետևում և պատասխան կրակ բացեն, բայց փաշան բացասական պատասխան տվեց, որովհետև եթե կրակ բացեին թուրքական կողմը կիմանար իրենց տեղը: Քիչ առաջ շարժվելուց հետո Անդրանիկը հրահանգել էր տղաներին, որպեսզի հանեն թաշկինակներն ու մաքրեն հրացանները: Քամին և ձյունը այնքան ահավոր էին, որ ծածկել էին գոմը:Արծվասարից հեռանալուց հետո որոշ ֆիդայիններ մթության մեջ կորցրեցին իրենց ճանապարհը և մոլորվեցին: Դժբախտաբար, ձյունը փակել էր դեպի Միրկոյի ախոռը տանող արահետը: Այնուամենայնիվ, Անդրանիկի մարդկանց մեծ մասը առաջ գնաց՝ երկու ժամվա ճանապարհը անցնելով ութ ժամում: Արևածագին նրանք նկատեցին Հավատորիկի ախոռները: Ախոռների տերը բացեց դուռը և ներս ընդունեց նրանց:Այս մարդը քառասուն տարի էր, որ հովիվ էր և իրենց չէր տեսել: Փաշան հարցրել էր, թե ինչ գիտեր վանքում փակված որբերի մասին: Նա էլ օրհնել էր վանքի որբերին: Այդ մարդու ասելով՝ Ռուսաստանից օգնություն պետք է գար նրանց: Թուրքերը գյուղից ամեն օր 50-60 հայեր բռնի տանում և աշխատեցնում էին՝ գետնափոր տներ պատրաստելու, վանքը պաշարող զինվորներին համար:[17]

Հայդուկները շարժվեցին դեպի Շեյխնիստ: Այնտեղ Անդրանիկը կանչեց գյուղի վեց պատանիների և ուղարկեց տարբեր ուղղություններով՝գտնելու այն ֆիդայիներին, ովքեր մոլորվել էին: Անդրանիկը ցանկանում էր անհապաղ հասնել Կոփ՝ միանալու մնացած խմբին:Նախքան Շեյխնիստից հեռանալը նա գյուղացիներին ասել էր, որ ոչխարների մի հոտ բերեին, որպեսզի հետևեին իրենց և ջնջեին իրենց ոտնահետքերը ձյան մեջ:Անդրանիկը Գևորգ Չավուշին իր մոտ է կանչում, որպեսզի հասկանա, թե ինչ էր պատահել, որ նրանք չմիացան խմբին և գնացին դեպի ձորը: Գևորգը պատմեց, թե երբ նրանք թուրք զինվորի հետ խոսում էին, տղաները առանց հնազանդվելու պատվերին, ձորն ի վար սահեցին շուտ ազատվելու համար:

[17] Տես նույն տեղում, էջ 92:

Նոր եկող անվարժ զինվորներից մեկը հակառակ պատվերի և խուզարկության, իր հրացանը գաղտնի լցրել էր, ձորն ի վար սահելուց հրացանը հանկարծ պայթել էր և գնդակը դեպի Մկրոն էր գնացել: Այնուհետև զննելուց հետո ոչինչ չէր պատահել նրան: Այդ դեպքից վախենալով նա փախել էր և միացել Անդրանիկին: Այնուհետև Կոտոյանն էր ձայն տվել ասելով, թե վիրավորվել է, բայց նա նույնպես անվնաս էր մնացել: Քսան օր 6000 զինվորների հետ կռվող խմբի համար հյուրասիրություն էին կազմակերպել: Բերկրանքի մեջ էր հայ գյուղացին այդ խանդավառության մեջ, հրճվանք էր տեսնել հայ զինվորին իր հաղթանակի մեջ: Այս իրարանցումի մեջ Անդրանիկն իր մտքերում ակամա հասել էր վանք: Ի՞նչ եղան որբերը, ի՞նչ համարձակությամբ և վայրի ատելությամբ թուրքերը իրենց պիղծ ոտքերը ներս դրեցին այդ օրհնված սրբավայրը: Ի՞նչպես նրանք կարող էին համարձակ ու անվախ ներս մտնել, երբ դեռ երեկ չէին կարող իրենց գլուխները բարձրացնել իրենց պատնեշների ետևից նայելու այդ հոյակապ գմբեթին, որի վրա քառաթև խաչն էր փայլում կապելով հայ ժողովվրդի սերն ու հավատքը դեպի իրեն և դեպի իր հարազատ կռվող զավակները: Այս ցավը, այս վիշտը երկաթի պես ծանր էր թվում, իր սիրելի Հարությունը և Ղազարը իրենց դալուկ դեմքերով աչքերի առջևով գալիս ու գնում էին: Կարծես դեռ ականջի մեջ հնչում էին նրանց վերջին հառաչանքները, վրեժի ուխտը: Նրանք ընկել էին ազգի ազատության համար, մխիթարություն ունենալով, որ իրենց գերեզմանը պիտի լինի վանքի օրհնված հողը միայն:[18] Անդրանիկը գյուղացիներին ասաց, որ երբ թուրքերը հարցնեն իրենց մասին՝ չուրանան: Ասեն, որ չգիտեն թե քանի հարյուր հոգի էին, երբ գյուղ մտան: Բոլորն էլ զինված էին, տասը, տասնհինգ հոգի ծեծեցին, բռնի հաց վերցրեցին, իրենց մի քանի տների մեջ լցրին, դռները փակեցին, պահապաններ դրեցին: Կես ժամ հետո արդեն ոչ ոք չկար և չգիտեին, թե ուր գնացին:

Խումբը ճամփա ընկավ և լուսաբացին հասան Գյուղաշեն գյուղը: Այնուհետև անցան Սեմալ, Գելիեգուզան: 1909 թվականինին Անդրանիկը գաղտնի անցագրով Կ. Պոլիս էր գնացել: Այնտեղ հանդիպել էր իր ծանոթ թուրք զինվորներից մեկին, ով դժգոհ իր վիճակից պատմել էր մի իրողություն: Կառավարությունը հրամայել էր, որ թնդանոթ բաց թողնեն վանքի վրա: Ալի և Ֆերիկ փաշաները, որոնք 6000 զինվորների հրամանատարներն էին, անհամաձայնության մեջ էին՝ թնդանոթ բաց թողնել վանքի վրա, թե ոչ:

Ալի փաշան պնդում էր, որ պետք թնդանոթ բերել և կրակել, թէ չէ հայերը վանքից դուրս կգային, իսկ իրենք էլ անպատիվ կլինեին, թե կառավարության, և թե ժողովրդի առջև, բայց Ֆերիկ փաշան հակառակվում էր, պնդելով, թե իրեն որևէ հրաման չէին տվել Կ. Պոլսից: Ալի փաշան դժգոհ Երիզա է մեկնում՝ 4-րդ բանակից թնդանոթներ և նոր հրաման ու զինվորներ բերելու համար: ճանապարհի կեսին լսելով հայդուկների վանքից դուրս գալը՝ ետ էր վերադարձել:

Ժողովրդական զրուցների համաձայն Ֆերիդ փաշան իսկույն Կ. Պոլիս էր գնացել, քանի որ Ֆերիկ փաշային կասկածում էին խաբեության մեջ: Ասում էին, թե նա կաշառված է եղել Անդրանիկ փաշաի կողմից, այդ պատճառով էլ վանքից դուրս գալը խաղ ու պար է եղել հայերի համար: Երբ Անդրանիկն ու իր երեսուն ֆիդայիները դեռևս գտնվում էին Առաքելոց վանքում, թուրքական բանակի մի քանի ստորաբաժանումների դեմ մարտեր մղելով, Մուշի բանտում երկու բանտարկյալ, ովքեր նաև ընկերներ էին, գրազ էին եկել: Նրանցից մեկը հայ էր Սաքո անունով՝ Սև Քար գյուղից, իսկ մյուսը քուրդ էր՝ Ջիբրանից: Քուրդը կարծում էր, որ Անդրանիկ փաշան դուրս է գալու վանքից: Սաքոն թերահավատորեն էր մոտենում այս հարցին, ասելով թե դա անկարելի էր, քանի որ թուրքական 6000 բանակը պաշարել էր վանքը: Քուրդն Սաքոյին ասել էր, որ եթե Անդրանիկը ողջ դուրս չգա վանքից, ինքը իր ձիերից մեկը կտա Սաքոյին: Իսկ եթե նա ողջ դուրս գա, ինչ կտա Սաքոն իրեն:

Սաքոն իր սազից բացի ուրիշ ոչինչ չուներ: Բայց, երբ նրան բաց թողնեին և երբ գնար Ռուսաստան, այնտեղից լավ նվեր կուղարկեր: Երբ Անդրանիկի և նրա զինվորների վանքից ողջ դուրս գալու լուրը տարածվեց Մուշի բանտի բանտարկյալների մեջ, քուրդը Սաքոին ասաց այդ մասին, և որ Անդրանիկ Փաշան վաղուց է արդեն ազատության մեջ էր: Նա երբեք անարդար արարք չէր գործել կամ որևէ մեկի քիթը անարդար կերպով արյունլվա չէր արել: Եթե Աստված նման մարդուն չպահպանի, էլ ո՞ւմ նա պետք է պահպանի:[19]

Հունվար ամսին Մուշի երբեմնի առաջնորդի փոխանորդ տեր Հարություն քահանայի հետ ռուս հյուպատոս Պ. Ռոմանովսկին լուր էր ուղարկել՝ ասելով, որ թուրքական կառավարությունը

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 110-111:

իր կատարած չարիքները վերագրում է հեղափոխականներին, ավելացնելով, թե նրանք են խանգարում երկրի անդորրն ու խաղաղությունը: Եթե նրանք հեռանան այս երկրից, գայլը և գառնուկը մեկտեղ կապրեն ու կառավարությունը պատասխանատու կլինի ամեն կաթիլ արյան համար: Անդրանիկը պատասխանել էր այսպես «Մենք այս երկրի զավակներն ենք: Ինչպես ռուս պաշտոնյան իր պետության հրամաններն է կատարում, մենք էլ մեր վերին հրամանները կատարող պաշտոնյաներ ենք, առանց վերևից տրվելիք հրամանի դուրս չենք կարող գալ:[20]

[20] Նույն տեղում, էջ 113:

Եզրակացություն

Սուրբ Առաքելոց վանքի կռիվը Անդրանիկի հեղափոխական կարիերայի առավել հերոսական և անհավանական համարձակ դրվագներից մեկն է: Այդ մարտի ընթացքում հերոսություն բառի իմաստը դրսևորվեց բառի բուն իմաստով: Այդ ուշագրավ և ծայրահեղ արարքով Անդրանիկը ցանկանում էր հույսի շողով պատել հուսալքված հայ ժողովրդին՝ ցույց տալով, որ ոչինչ կորած չէ, որ հայերն դեռևս կարող են մարտնչել: Իր անձնական քաջության և անձնազոհության օրինակով հերոսը ցանկանում էր ոգևորել հայ ժողովրդին համարձակորեն կրել իր խաչը և գերբնական ջանքերով պայքարել հանուն գոյատևման: Անհրաժեշտ է ընդգծել, որ Առաքելոց վանքի կռիվը յուրօրինակ ձեռնարկում էր հայդուկային պայքարի մարտավարությունում: Հայդուկների մղած կռիվները մինչ Առաքելոց վանքի կռիվը կրում էին պաշտպանական բնույթ: Որպես օրենք, նախահարձակ կողմը մշտապես հակառակորդն էր, իսկ այս անգամ նախահարձակը հայդուկներն էին:

Անհրաժեշտ է ավելացնել, որ հայ ժողովուրդն ուղղափառություն ընդունելուց հրաժարվեց ոչ թե Առաքելոց վանքի կռվից հետո, այլ նա պետք է հրաժարվեր դրանից, քանի որ այն ոչ մի միջամտություն չբերեց: Ուղղափառության խնդիրը բխում էր ռուսական քաղաքականության շահերից, սակայն դա նաև ձեռնտու չէր Անգլիային: Եվ հենց պատահական չէր, որ վանքի կռվի օրերին անգլիական հյուպատոսը հրաժարվեց հօգուտ հայոց որևէ միջամտությունից:

Մշո ս. Առաքելոց վանքի կռիվը մեծ ազդեցություն ունեցավ ինչպես հայ ժողովրդի համար, այնպես էլ թուրք և քուրդ քոչվորների համար: Ժամանակակիցների հավաստմամբ, երբ դեռ հայդուկները վանքի պարիսպների մատույցում քաջաբար կռվում էին, դրսում հայ ժողովուրդը արդեն երգեր էր հյուսում և երգում նրանց մասին: Մարտերից հետո ժողովուրդը նորից սկսեց երգել իր քաջերի մասին, այլևս չէր մտածում ուղղափառ կրոնը ընդունելու մասին և իր հույսը նորից կապեց հայդուկների հետ: Արևմտյան Հայաստանի հայդուկային կռիվները հերոսական անձնուրաց, բայց անհեռանկար, ընդհանուր ապստամբության աշխատանքների հետ չհամադրվող և ջարդերի համար առիթ հանդիսացող ձեռնարկներ էին: Այս գործողությունների հետևանք էին այն, որ թուրքական կառավարությունը արդեն 1903 թվականներից սկսած միջոցառումներ էր մշակում Սասունը տարանջատել մյուս շրջաններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անդրանիկ Առաքելոց վանքին կռիւը, Երևան, ԵՊՀ հրատ., 2012:
2. Անդրանիկ յուշերը, Պէյրութ,1935:
3. Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա. Ա., Հայրենագիտական էտյուդներ: հրատ. Սովետական գրող, Երևան, 1979:
4. Գրիգորըան Հ. Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորմա խնդիրը (1890-1908թթ.) Երևան 2004:
5. 5. Դարբինեան Արտակ, Հայ ազատագրական շարժման օրերէն յուշեր (1890 էն 1940)Փարիզ,1947:
1. Դրօշակ,ապրիլ, 1902, թիվ 4 (124):
2. Լյուլեճյան Լ., Անդրանիկի բերանով Առաքելոց վանքի կռիվը, Պեյրութ, 1968:
3. Հայրենիք օրաթերթ, Բոստոն, 1905, թիվ 1 (287):
4. Մաղալյան Ա., Առաքելոց վանքի հերոսամարտը. առասպել և իրականություն, Բնօրրան, 2001-2003:
5. Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը հիշատակները, հտ.3, Թեհրան, 1982:
6. ՍասունիԿ., Պատմութիուն Տարոնի աշխարհի,Պէյրութ, 1956: